Քամու ուժի որոշման Բոֆորտի սանդղակը			
Բոֆորտի բալլերը	Քամու արագությունը (մ/վ)	Քամու բնութագիրը (անվանումը)	Քամու գործողությունը
0	0-0, 2	Անդորր	Լրիվ անհողմություն. ծխնելույզի ծուխը չի թեքվում, բարձրանում է ուղղաձիգ:
1	0, 3-1, 5	Խաղաղ	Ծխնելույզից ծուխը բարձրանում է որոշ թեքությամբ:
2	1, 6-3, 3	Թեթև	Օդի շարժումը զգացվում է դեմքի վրա: Տերևները խշշում են:
3	3, 4-5, 4	Թույլ	Տատանվում են տերևները և փոքր ճյուղերը: Ծածանվում են փոքր դրոշակները:
4	5, 5-7, 9	Չափավոր	Տատանվում են բարակ ճյուղերը և ծառերի կատար-ները, քամին բարձրացնում է փոշի և թղթի կտորներ: Ջրի մակերեսին նկատվում է մեղմ ծփանք:
5	8, 0-10, 7	Զով	Տատանվում են միջին մեծության ծառերի ճյուղերը: Ջրի մակերևույթին հայտնվում են ալիքներ:
6	10, 8-13, 8	Ուժեղ	Տատանվում են խոշոր ճյուղերը, ճոճվում են բարակ ծառերը:
7	13, 9-17, 1	Խիստ	Ճոճվում են ոչ մեծ ծառերի բները: Գոյանում են փրփրաբաշ ալիքներ:
8	17, 2-20, 7	Շատ խիստ	Կոտրատվում են ծառերի ճյուղերը: Դժվար է քայլել քամուն հակառակ: Ալիքների կատարից պոկվում է փրփուրը:
9	20, 8-24, 4	Փոթորիկ	Աննշան ավերածություններ. տանիքներից կարող են պոկվել կղմինդրներ:
10	24, 5-28, 4	Ուժեղ փոթորիկ	Զգալի ավերածություններ. կարող են ծառերը արմատախիլ լինել:
11	28, 5-32, 6	Դաժան փոթորիկ	Մեծ ավերածություններ. պոկվում են տանիքները, կոտրվում են էլեկտրասյուները:
12	32, 7 և ավելի	Մրրիկ	Քամու գործողությունն ավերիչ, ամայացնող է. կարող են փլվել նույնիսկ քարե շենքերը: